

Դակ գրածախներու շատւորութեանը կողմանէ Փարիզ 1 ոնտրայէն ալ վեր է կ'ըսեն, վասն զի 600 հատ գրածախն ու խանութ կը համրեն, 80 հատ ալ տպարան . ասոնց մէջ 770 մամուլ կը բանի եղեր 1825ն, և իրենց բերած շահը 50 միլիոն ֆրանքի կը հանէին ան ատենք : Ուագաւորական տպարանը 1531ն հիմներ է Ֆրանչիսկոս Ա թագաւորը, և գրերու հարստութեանը կողմանէ հիմա աշխարհքիս մէջ մէկ հատիկ է :

Եւրոպայի մէջ մէկ քաղաք մը չկայ որ այնչափ զուարձութեան տեղեր, զքօսարաններ, տեսարաններ ու հրապարակական խաղեր ունենայ՝ ինչպէս Փարիզ : — Քաղաքին եկամուտը 45 միլիոն ֆրանքի կը հասնի . հաշիւ ըրած են որ եթէ Գաղղիոյ մնացած տեղերն ալ համեմատութեամբ նոյն եկամուտը ունենային, բոլոր տէրութեան եկամուտը ինչուան 2,800 միլիոն ֆրանք կ'ըլլար : — Այս ահազին ընդարձակութք քաղաքը տասուեր կու մեծամեծ կողմ բաժնուած է, և 48 թաղ. ամէն մէկ թաղը մէյմէկ քաղաքի պէս բաղմամարդ է : — Արհեստներն ու վաճառականութիւնը շատ ծաղկած ու բանուկ են . միայն 14 միլիոնի շալ կը գործուի մէջը, ու 6 միլիոնէն աւելի զարդարանքի բաներ . տարին 47 միլիոն ֆրանքի բան ալ գուրս կը խրկէ քաղաքը՝ իւրեւ իւրեն աւելորդ . վասն զի բոլոր Գաղղիոյ արհեստաւորներն ալ իրենց ձեռագործներուն համար մասնաւոր խանութ ունին Փարիզու մէջ :

Բոլոր աս ստորագրութիւնը պէտք է համարիլ մէկ վեր՝ ի վերոյ տեսութիւն մը, իւր թէ կարդացողը աշխարհացուցի վրայ մէկ նայուածքով մեծամեծ աշխարհներ տեսնէր . վոզ զի իրաւոցնէ Փարիզու պէս մայրաքաղաքներուն ամէն մէկ մասերն ու յատկութիւններն ալ մէյմէկ երկայն հատուածներու նիւթ կը նան ըլլալ . աս անգամ այսչափովս գոհ ըլլանք :

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

ՈՒԿԱՆ :

ՈՒԿԱՆ Հանդէսը սուլդան ՈՒուրատ Գ հաստատեց 1588ն, 'ի յիշատակիրենց մարդարէին ծննդեանը . ինչպէս որ Ֆէլիպ բառն ալ ծընունդ կը նշանակէ : ՈՒկալ երկու մեծ տօներուն պէս՝ աս մէվլուտն ալ սուլդան Ահմէտի մզկթին մէջ կը կատարուի՝ կէսօրուընէ երկու ժամ առաջ : Ուագաւորը բոլոր մեծամեծներով հօն կ'երթայ . և անոնցմէ առաջ ներքինապէտը՝ ներքինիներով ու շատ զինուորներով . վասն զի ինքը մասնաւոր կերպով ՈՒքքէի ու ՈՒտինէի հօգաբարձու սեպուելովը, աս հանդիսին ալ գլխաւոր վերակացուն է :

Տաճկաց գրքերուն մէջ աս հանդէսին կարգերն ու արարողութիւնները տեղն 'ի տեղը գրուած են . հիմա ալ ընդհանրապէս նոյն կարգով կը կատարուի կ'ըսեն . բայց որովհետեւ մեծամեծաց պաշտօններն ու զինուորական կարգերը փոխուեցան՝ մենք չենք գիտեր թէ ան արարողութիւններուն ո՛ր մասերը պահուած են, ուստի հօս համառօտ կերպով մը հին հանդէսը կը ստորագրենք :

Ո էզիրն ու գենպէտը ց միւֆթին խորանին կամ միհրապին առջեւը՝ մէկը աջ դին մէկալը ձախ դին բարձր բարձերու վրայ կը նստէին : Ո էզիրին ձախ կողմը կը կենային գափուտան փալան, Էնէլէ աղասն ու ակֆէնէրուար է ֆէնտին՝ իրեն խոճակեաններովը, ամէնքն ալ մէյմէկ կապերտի կամ էհրամի վրայ նստած . իսկ միւֆթին ձախ կողմը կարգ կարգ կը նստէին կարդացողները, այսինքն իւլիմաններն ու դիտէրիմանները : Այս երկու շարքին մէջտեղը կը նստէին բէիս է ֆէնտին ու չառուշ պաշն երեսնին դէպ'ի թագաւորը դարձու .

ցած : ‘Ա, ո՞գէստ-ի-ւ-լէ լրաֆը , ո՞ր էմիր-ներուն գլուխը կը սեպուի , կարդացողներուն կարգին մէջ աւելի փառաւոր տեղ ունէր , ու կանանչ վրանի մը տակ կը նստէր՝ իրեն էմիրներովը : Ուշիքանմը էքէնտին այսինքն արարողապետը , և գարագուռագէ՝ որ վէզիրին յատուկ սպասաւորն էր , վէզիրին քովը կը կենային ոտքի վրայ՝ կռնակնին դէպ’ի միհրապը դարձուցած : Օ աղաբի պաշին ու սամուռնմի պաշին ալ օտքի վրայ կը կենային՝ խարդիպներուն այսինքն քարոզիչներուն ամպիռնին տակը : Ասոնցմէ ետև երկու կարգ ենիչերի կը կենային՝ միակերպ հագուստով , ետքը բոլոր ժողովուրդը :

Ան միջոցին թագաւորը կուգար իրեն պալատականներովը , ու ծածուկ գունէ մը իրեն համար պատրաստած քարձր տեղը կը մտնէր՝ առանց տեսնուելու : Աէկ նշանով մը թագաւորին գալը իմացուելուն պէս՝ բոլոր հանդիսականները ոտք կ’ելլէին . վէզիրն ու միւֆթին քանի մը քայլ դէպ’ի թագաւորին տեղը կ’երթային , որ վանդակով գոցած մասնաւոր աթոռ մըն էր , ու անոր գլուխը կամ խոյրը միայն տեսնելնուն պէս՝ կէս մէջքով կը ծուէին . նոյնպէս կ’ընէին նաև բոլոր հանդիսականք , ու եաքը նորէն տեղերնին կը դառնային ու կը նըստէին :

Հանդէսին սկիզբը ներբող մը կը զուրցուէր Աահմէտին վրայ՝ իրեք մաս բաժնած . առջի մասը Այա Աուֆիային շեխը կուտար , երկրորդը սուլդան Ամէտին շեխը , երրորդը մէկալ թագաւորական մզկիթներէն մէկուն շեխը : Ան ներբողին ամէն մէկ մասին ատենը սիլէկտար աղան ու չուգագար աղան որ պալատականներուն գլխաւորներն են , իրեք իրեք անգամ քարոզին կը բերէին կուտայի , վարդի ջուր ու հալուէի ծուխ : Այս միջոցին վիշտ-քիւտ պալ-նամիներէն վաթսուն հոգի նոյն հարկինքները կ’ընէին բոլոր կարգացողներուն ու մեծամեծներուն : Ամէն ան-

գամ որ շեխերէն մէկը իր ներբողը կը լմբնցընէր ու կը սկսէր վար իջնալ , եալլամը էքէնտին ու պալմաճիլքը գեահետունին , որ պալատի իշխաններէն են՝ ներքինապետին ձեռաց տակը , կ’երթային ամպիռնին վարի աստիճանները քարոզին թեւերը կը մտնէին , վար կ’իջեցընէին ու մէյմէկ մուշտակ կը հագցընէին անոր՝ թագաւորին կողմանէ :

Աերբողէն ետև մզկիթին գաելլէն . ները՝ նար շէրֆ ըսուած երգը կ’երգէին . ուրիշ տասնըհինդ երգիներ ալ իլահի ըսուած երգերէն մէկը . անոնցմէ ետքը իրեք հոգի կ’ելլէին մէլլատիյէ ըսուած տաղը կ’երգէին որ տաճկերէն է : Ան ատեն երկու հարիւր հոգիի չափ պալմաճինէր զանազան շաքարեղիններ ու գոյնզգոյն օշարակներ կը բաժնէին . և անոնցմէ ալ առաջ զաղարձի պաշին ու սամսնմի պաշին իրենց ձեռքովը կը տանէին ան զարգարուն խաններէն մէյմէկ հատվէզիրին ու միւֆթիին առջեւը կը դընէին : Այագաւորին համար պատրաստուած խանը ամենէն փառաւորը կ’ըլլար . անիկայ ալ թագաւորին քովը գնելը սիլէկտար աղանին պաշտօնն էր :

Աէկվուտիյէն լմբնալէն ետև Աէկքէի շերիֆէն եկած թուղթը կը կարդացուի : Ա ամ զի ամէն տարի թագաւորը թուղթ մը կը գրէ շերիֆին՝ ուխտաւորներուն համար յանձնարարութիւններ ընելով . աս թուղթը սուրբէ էմինին կը տանի Աէկքէ . իսկ շերիֆին պատասխանը դոժուէմէ պաշին կը բերէ , որ ուխտաւորներէն առաջ կ’ելլէ Դամասկոսէն , ու մէվլուտին քանի մը օր մնացած Աոստանդնուպոլիս կը համարի : Աս թղթաբերը պալմաճիններուն քովը կեցած կ’ըլլար՝ խիլայ հագած , ու գլուխը սեխոյը՝ գարգմանակով : Դարագուլագը հրամցընելուն պէս առաջ կ’անցնէր աս թղթաբերը , ու շերիֆին թուղթը՝ կանանչ կերպասէ քսակի

մը մէջ դրած՝ վէզիրին ձեռքը կու-  
տար . վէզիրը րէիս էֆէնտիին կը-  
յանձնէր, անիկայ ալ ծանր ծանրքա-  
լելով, չաւուշպաշըին՝ թէշրիֆաթ-  
շիին ու միւժտէճի պաշըին ետևէն  
կ'երթար թագաւորին աթոռին կը-  
մօտենար : ‘լ, երբինապետը աթոռին  
դռնէն կ'առնէր թուղթը՝ թագաւո-  
րին կուտար . անիկայ ալ վեր ’ի վերոյ  
ացքէ անցընելէն ետև նորէն ներքի-  
նապետին ձեռքովը րէիս էֆէնտիին  
կըյանձնէր որ թագաւորական դի-  
ւանը պահուի : ‘լոյն ատենը մուշ-  
տակ կը հագցընէին ներքինապետին՝  
թագաւորին առջեր . ներքինապետն  
ալ մէյմէկ խիլայ հագցընել կուտար  
րէիս էֆէնտիին, իրեք իշխաններուն  
ու իրեք երգիչներուն . ետքը համա-  
ռօտ աղօթք մը կ'ընէին ու հանդէսը  
կը լմբնար :

Պատմական թագավորական  
մզկիթներու մէջ ալ կը կատարուի,  
բայց հանդէսը այնչափ փառաւոր  
չըլլար :

Ո՞է վլուտը ամէն տարի ըէպիլ էվլ  
վլէլ ամսուն 12<sup>են</sup> կուգայ . ուստի մարտի  
8<sup>են</sup> ընկած էր աս տարի : Իսկ մեր  
աս տարուան օրացուցին մէջ մարտի  
8<sup>են</sup> զատ՝ սեպտեմբերի 30<sup>են</sup> ալ Ո՞է է  
շուրջ դրուիլը՝ տպագրութե սիսալ է :

ԲԱՐԱՏԵՐԱԿՈՒԹԵՐՆ

ԱՓ ՅԱՓՈՅ

## ՅՈՐՍԻԿՆ ԻՄ ՎԵՐԱՑԵԱԼ

Ո՞չ յիշատակ, յոյր ազդել  
 Խաղան սուսելքը ընդ աղիս,  
 Եւ մինչ մեկնի՝ կըտրի թել  
 Յուստածնունդ պրատեկիս :

Խուն գէպք երկայն ՚ի զդացուած  
 Ի վայրկենի ՚նդ իս անցին .

Ճար և Ճարակ քըմընաց  
 Իմաստամէր իմ անձին .

1 ¶ 22 աւուր ամսեանն յուլիսի գայ յանկարծ 'ի պատուհան քերթողին դեղձանիկ թուղուն ( գուարին ), 'ի վանդակէ ուստիք անշուշտ զերծեալ . և 'ի գերեսն հանեալ զինդութիւն նորա և զյոյս , ազգէ նմա անդէն զոյբս զայս :

Զոգենիցկար զիմ փետուրս  
Աւեսոլ մըխեմ սիրս 'ի խորս ,  
Զարիւնս մեռեալ տալ 'ի գուրս  
Զոր եղ որսիկն իմ անորս :

Ես նըստէի 'ի դահլիճ  
Ի խորհրդոց սահեալ լիճ ,  
Եւ կամենայց զինև շուրջ  
Պարն յաւելոյր իմաստ ըլորջ ,  
Եւ ես յածեալ խորասյզ  
Մինչ ըզմբաց քամեալ հոյզ  
Թուէի հանել ընդ Հորմոս  
Ջինջ մարդարիտ ցօլահոս . . .  
Սիրտ իմ թընդայ . . . յանկասկած  
Ընդ լուսամուսն 'ի կողաց  
Ձայնիկ լըւայ սրբասակը ,  
Ծաւիւն ծավիւն ինձ ասէր :  
Ըզմուսայից թողեալ դաս  
Եւ թօթափեալ զԱթենաս ,  
Յարեայ Ճապուկ յոտն 'ի մատն  
Ըզունչ գելեալ անընդհատ  
Ի սրբտատրոփ յիմ 'ի լանջ ,  
Լեալ ակն ողջոյն և ականջ .  
Վարագուրին ընդ բացուած  
Տէսի զեեզ , տես անմոռաց . . .  
Պատրշգամանց անդ 'ի ծայր  
Կացեալ զժաւիւնս որո՛ջայր  
Ամենեին նազենիկ  
Ի գոյնն 'ի տես գեղձանիկ .  
Վազեալ կօչքօք ծիրանի ,  
Բըրուկն 'ի նիւս ծածանի ,  
Եւ ոսկեգոյն պատմուձան  
Յարփւոյն 'ի չոլ 'ի Ճաճանչ .  
Եւ թիկնամէջքն ընդ խոնարհ  
Ըուշանափայլ Ճաճապարհ  
Ճերմակ վետրոց իջանէր ,  
Մինչ 'ի գաւակ ժամանէր .  
Խակ այն բըրերն ոպնիազ  
Քան զարեւակն աննիփազ  
Որ տային փայլ ըզփայլ՝  
Հրաշեց ինձ վեհ հայելի .  
Զե՞ վըժիտք զի՞ փոքրքունք  
Թրիստանեսիլ նոր աստղունք :

Զինչ յիս բաղձումն այլ մընայր ,  
Բայց վայելել յայն յանայր .  
Երշանկութեան անձնատուր  
Բազումք գարձան լոկ թափուր ,  
Թերես մըթար մօսալուտ  
Զըգէ զբաղդիւն ամպ բալուտ .  
Այլ խորհրդոց զինչ ինձ պէտ ,  
Հաւորս եղէ , չեմ պըւէտ :

Հապա 'ի գործ լեր Համբոյժ ,  
Մատիր յուշիկ և ըզգոյշ ,  
Թեթև ընդ սեամսն սահեալ ,  
Զի կայ հեռիքէն մի քայլ . . .  
Կաց կաց , կարձեան զձեռսդ 'ի քէ  
Մի խըրանուցուս հաւիկդ հեզ .  
Տէս զի գոլով առ քեզ դամ ,  
Վստահ լըր յիս , չեմ կարկամ .  
Ահա քան զաշտ երերուն  
Սիրտ իմ 'ի քեզ , հաւ սիրուն .  
Ե՞կ գեղձանիկ , եկ յիմ ձեռս . . .  
Բարէ , եթող զայն գերես .  
Եթող բզձեռս և թրուեալ .